**Արձանագրություն N 2-3**

**ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/6 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի «Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 13.05.2026թ.

ժամը 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Մելիքյան

Անդամներ՝ Կ. Բրուտյան

Էդ. Առուստամյան

Ա. Աչոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Հ. Պապյանը

**13.05.2026թ. գնահատող հանձնաժողովի N 2-2 արձանագրության 1.1, 1.2, 1.3 կետերը նոր խմբագրությամբ շարադրելու մասին**

---

(Լ. Մելիքյան)

«1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ առողջապահության նախարարությունից, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից, ՀՀ պաշտպանության նախարարությունից, ՀՀ քաղաքաշինության կոմիտեից, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից, Երևանի քաղաքապետարանից ստացվել են պատասխան գրությունները:

1.2 Գնման ընթացակարգի մասնակիցներ՝ «Ավանգարդ շին» ՍՊԸ, «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ և «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումի, «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի, «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիումի հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

**<u>«ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիում</u>**

- հայտով ներկայացված նմանատիպ պայմանագրերի հանրագումարը պակաս է գնման գնի 60%-ից: Հիմք ընդունելով Ձեր համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի 1.2.1 կետի պայմանը՝ անհրաժեշտ է ապահովել հրավերի նմանատիպ պայմանագրերի հանրագումարի 60%-ին վերաբերող պահանջը:

**<u>«Ավանգարդ շին» ՍՊԸ, «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ և «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիում</u>**

- համանման ՀՀԳՄՎՀ-ԲՄԱՇՁԲ-23/110-1 պայմանագրի ռիսկայնության աստիճանը ըստ ներկայացրած փաստաթղթերի հնարավոր չէ գնահատել: Նշված պայմանագիրը գնահատելու համար անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր կամ ներկայացնել այլ նոր համանման պայմանագիր՝ հիմք ընդունելով Ձեր համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի 1.4.1 կետի պայմանը:

**<u>«Բաղրամյանշին» ԲԲԸ</u>**

- Հայտով ներկայացվել է ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/4-2 պայմանագրի միայն ավարտական ակտերը, անհրաժեշտ է կցել նաև ամբողջական պայմանագրի պատճենը:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «Ավանգարդ շին» ՍՊԸ, «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ և «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին, «Բաղրամյանշին» ԲԲԸ-ին, «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիումին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 14.05.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումները ներկայացվելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/6 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին: »:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

**2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Լ. Մելիքյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունը մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 15.05.2026թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------------ Լ. Մելիքյան

Անդամներ՝ ------------------------------------ Կ. Բրուտյան

------------------------------------ Էդ. Առուստամյան

------------------------------------ Ա. Աչոյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------------ Ա. Մանուչարյան